

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) որակավորման քննություններին (այսուհետ՝ քննություն) մասնակցող Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող կազմակերպությունների ղեկավարների և այլ անձանց հերթագրման, նրանց կողմից փաստաթղթերի ներկայացման, քննության անցկացման, քննության արդյունքների ամփոփման, որակավորման վկայականների տրամադրման և քննության արդյունքների բողոքարկման կանոնները:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Կենտրոնական բանկի թեստավորման ծառայությունում (այսուհետ՝ Թեստավորման ծառայություն) քննություններ անցկացնելու նպատակով Կենտրոնական բանկի իրավաբանական վարչությունը (այսուհետ՝ Իրավաբանական վարչություն) յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանում է քննության ստույգ օրեր, որի մասին տեղեկությունները հրապարակվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

3. Քննությանը կարող են մասնակցել քննության համար նախօրոք հերթագրված անձինք (այսուհետ՝ թեկնածու):

4. Թեկնածուները քննությանը մասնակցելու համար հերթագրվում են անձամբ Կենտրոնական բանկի Թեստավորման ծառայություն ներկայանալով, հեռախոսով, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում (այսուհետ՝ Համակարգ) տվյալներ մուտքագրելով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր ձևով ուղարկված նամակով:

5. Հերթագրվելու համար թեկնածուները հայտնում են (Համակարգից օգտվելու դեպքում լրացնում են) հետևյալ տեղեկությունները.

- 1) անուն, ազգանուն,
- 2) քննությանը մասնակցելու ամիսը, օրը, ժամը,

- 3) որակավորման տեսակը,
- 4) հեռախոսահամարը,
- 5) էլեկտրոնային հասցեն (առկայության դեպքում):

6. Հերթագրված անձանց վերաբերյալ Թեստավորման ծառայության աշխատակցի կողմից գրառում է կատարվում էլեկտրոնային գրանցամատյանում, որը միացված է Համակարգին: Ընդ որում, հեռախոսով հերթագրվելու դեպքում հեռախոսագանգը ավտոմատ կերպով ամրագրվում է համակարգչում:

7. Քննությանը մասնակցելու անհնարինության դեպքում Իրավաբանական վարչության լիցենզավորման և գրանցման բաժնի (այսուհետ՝ լիցենզավորման և գրանցման բաժին) աշխատակիցը այդ մասին տեղեկություններ է հայտնում թեկնածուին:

8. Թեկնածուները քննությանը կարող են մասնակցել՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

- 1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
- 2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

9. Թեստային քննությունն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում, որն ապահովված է համապատասխան պայմաններով:

10. Թեկնածուների տվյալները և համապատասխան թեստերը ընդհանուր համակարգում մուտքագրելուց հետո թեստավորման ծառայության աշխատակիցը ստուգում է թեկնածուի ինքնությունը և թույլատրում է նրան մուտք գործել տեստավորման անցկացման սենյակ՝ ըստ ցուցակի նստեցնելով համապատասխան համակարգչի մոտ:

11. Թեստավորման ծառայության աշխատակիցը թեկնածուներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը:

12. Թեստային քննությունն անցկացվում է համակարգչային ծրագրով: Քննության անխափան ընթացքը ապահովվում է Թեստավորման ծառայության աշխատակցի կողմից: Քննության ընթացքին կարող են հետևել Լիցենզավորման և գրանցման բաժնի աշխատակիցները:

13. Գրավոր քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից, ինչպես նաև աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից:

14. Զննության ամբողջ ընթացքը տեսախցիկների միջոցով վերահսկվում է Թեստավորման ծառայության և Կենտրոնական բանկի Անվտանգության վարչության աշխատակիցների կողմից:

15. Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև թեստավորման առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին հանձնվում է իր հանձնած տեսետի վերաբերյալ հաշվետվությունը՝ արտահայտված տոկոսով: Թեկնածուն ստորագրում է հաշվետվությունը և թղթային ձևով որակավորման վկայական պահանջելու դեպքում այդ մասին նշում է կատարում հաշվետվության վրա, որը մնում է կենտրոնական բանկում:

16. Թեստավորման ծառայության աշխատակիցը քննության դրական արդյունք ապահոված թեկնածուներին տեղեկացնում է որակավորում ստանալու ժամկետները:

17. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկությունները տեղադրվում են Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

18. Որակավորում ստացած անձի կողմից թղթային ձևով որակավորման վկայական պահանջելու դեպքում վկայականը պատրաստվում է Թեստավորման ծառայության աշխատակցի կողմից:

19. Վկայականները թեստավորման ծառայության աշխատակցի կողմից պատրաստվելուց հետո հանձնվում են Կենտրոնական բանկի աշխատակազմ: Վկայականների վրա դրվում է Կենտրոնական բանկի նախագահի ստորագրության ֆաքսիմիլ վերարտադրությունը, կնիքը և վերադարձվում է թեստավորման ծառայության: Կնքված վկայականները թեստավորման ծառայության աշխատակցի կողմից համապատասխան ցուցակով ուղարկվում են ընդհանուր բաժին թղթային ձևով վկայականները պահանջած անձանց տրամադրելու համար:

21. Թեստավորման ծառայության աշխատակցի կողմից յուրաքանչյուր թեկնածուի որակավորման վկայականի պատճենը (առկայության դեպքում), անձնագրի պատճենը պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի և քննության արդյունքների վերաբերյալ հաշվետվության հետ միասին հանձնվում են արխիվ:

22. Զննության արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դրանք կարող են բողոքարկվել թեկնածուի կողմից քննության անցկացման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

23. Զննության արդյունքները բողոքարկելու դեպքում թեկնածուն դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ՝ համաձայն հավելվածի:

24. Դիմումի հիման վրա Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների, Անվտանգության և Ֆինանսական համակարգի

քաղաքականության և վերլուծությունների վարչությունների համապատասխան աշխատակիցները, մուտքագրելով համապատասխան ծածկագրերը, համակարգչից հանում են բողոքարկված թեստային աշխատանքը:

25. Թեստային աշխատանքը բողոքը ներկայացնելուց հետո 5 օրվա ընթացքում վերանայվում է Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչության կողմից և կազմվում է համապատասխան արձանագրություն բողոքը բավարարելու կամ այն մերժելու վերաբերյալ:

26. Բողոքը բավարարելու կամ այն մերժելու վերաբերյալ արձանագրությունը տրամադրվում է Թեստավորման ծառայությանը, որտեղից քննության արդյունքները բողոքարկած անձինք տեղեկություններ են ստանում դրա վերաբերյալ:

27. Քննությունների կազմակերպման ողջ ընթացքի նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Լիցենզավորման և գրանցման բաժինը:

28. Իրավաբանական վարչությունը Կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովին է ներկայացնում յուրաքանչյուր օրվա քննության արդյունքները:

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում որակավորման քննությունների կազմակերպման կարգի

ԳԻՍՈՒՄ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

Բողոքարկողի անուն, ազգանուն

Քննության անցկացման օր, ամիս, տարեթիվ

Որակավորման տեսակը

Հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե

Բողոքարկման պատճառ հանդիսացած խնդրահարույց հարցի
նկարագրությունը

« » ----- 20 թ.
ստորագրությունը

ղիմողի